ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/41 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կռունկած-պրոյեկտորի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 27.03.2024թ. ժամը 14:15-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Մարաբյան
Հանձնաժողովի անդամ՝ Նազիկ Հովասափյան
Հայկ Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	LA IMPORT LLC	-
2	Ի Ջի Էլեկտրոնիքս ՍՊԸ	-
3	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	corp@patron.am

3. **Հակադարձ աճուրդի արդյունքում յուրաքանչյուր չափաբաժնի մասով համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Ր	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«LA IMPORT» LLC		«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ		«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	1300000	950000	1140000	1027000	1232400	1038500	1246200

5. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 «LA IMPORT» LLC -ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է հավելված 1.3 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը, իսկ ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- հավելված 1 դիմում հայտարարության մեջ սխալ է նշված ընթացակարգի ծածկագիրը
- հավելված 1 դիմում հայտարարության մեջ նշված չափաբաժինները չեն համապատասխանում փաստացի համակարգում նշված չափաբաժնին
- հավելված 1 դիմում հայտարարությունը թերի է լրացված և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «LA IMPORT» LLC –ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել «LA IMPORT» LLC –ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 29.03.2024թ.

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 «LA IMPORT» LLC - ն սահմանված ժամկետում չի շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 7.1 կետը՝ մերժել «LA IMPORT» LLC -ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել.

«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Գնահատման արդյունքների մասին

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 19-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «LA IMPORT» LLC -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Աստղիկ Մարաբյան /նախագահ/

---------- Նազիկ Հովասափյան

---------- Հայկ Սարգսյան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/